ԿԱՀՈՒՅՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՊՀ ԻՄ ԲՀԱՀ ԾՁԲ -18/16

«29» հունվարի 2018թ

ք. Իջևան

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղը (այսուհետև՝ «Պատվիրատու»), ի դեմս ղեկավար Ս. Առաքելյանի, որը գործում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղի կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Ռոբերտ Մարկոսյան և ընկերներ»ՍՊԸ-ն (այսուհետև՝ «Կատարող»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղին մատուցել մատուցել կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ այսուհետև՝ «Ծառայություն», իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. «Կատարող»-ի պարտավորությունները և իրավունքներ

2.1.« Կատարող»-ը պարտավորվում է՝

2.1.1. Ապահովել սույն պայմանագրի 1.1. կետում նշված Ծառայության մատուցումը՝ մինչև ս.թ. դեկտեմբերի 28-ը ներառյալ:

2.1.2. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ պատշաճ չկատարելու համար վճարել տուգանք պայմանագրի 4.1. կետով սահմանված գնի 0.05 տոկոսի չափով:

2.1.3. Սույն պայմանագրի 1.1. կետով նախատեսված ծառայության մատակարարման ժամկետը խախտելու համար վճարել տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրացուցային օրվա համար պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ 0.05 տոկոսի չափով:

2.2. «Կատարող»-ն իրավունք ունի՝

2.2.1. Մատուցված ծառայության դիմաց գումարը չփոխանցելու դեպքում օրենքով սահմանված կարգով պահանջել գումարը:

3. «Պատվիրատու»-ի պարտավորությունները և իրավունքները

3.1. « Պատվիրատուն» պարտավորվում է՝

3.1.1. «Վաճառող»-ին փոխանցել մատուցված ծառայության գումարը յուրաքանչյուր ամիս:

3.2. «Պատվիրատուն» իրավունք ունի՝

3.2.1. «Կատարող»-ի կողմից մատոցումը չիրականացնելու դեպքում չկատարել վճարում:

4. Պայմանագրի գինը և վճարման կարգը

4.1. Պայմանագրի գինը կազմում է 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

4.2. Վճարումը կատարվում է ներկայացված հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

4.3. Սույն պայմանագրի 2.1.2. և 2.1.3. կետերով նախատեսված տուգանքների և տույժերի հաշվարկումը և հաշվանցումն իրականացվում է պայմանագրի 4.1. կետում նշված գումարից: